ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «19» դեկտեմբերի 2023 թ. N2523-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1550-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի ««ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունվարի 29-ի N 60-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1550-Ա հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետից հետո լրացնել նոր 5-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 540-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 219-Ն որոշում» - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «2404 11 000» (տաքացվող ծխախոտով արտադրատեսակ) ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք:»:

2. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-22 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

3. «ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N PI003744 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N PI003744 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) 1 օր հետո էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

4. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված լրացումը գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

30/12/2023

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124